

րայց կը պահսէր խորան պատարագի: Պօղոս վարդապետ կանգնեց պատշաճ խորան մը: Անկէ անցաւ Ազուլիս տեղացի վաճառականներու հրաւերով: Հինաւուրց եկեղեցւոյ՝ Ս. Թումայի դուռը «ի բազում ժամանակաց» փակ էր. եւ ամէն փորձ՝ բանալու գայն, անյաջող անցած էր: Պօղոս վարդապետ սքանչելեօք կը բանայ դուռը: Եկեղեցւոյ բացման հռչակը ընդհանուր ուրախութիւն կ'առթէ. ամէն կողմէ գոռ հու տայ ժողովուրդը գէպի Ազուլիս: Օգտագործելով առիթը կը քարոզէ վարդապետը եւ կը հանդիսանայ լուսաւորիչ արեւելեան աշխարհին: «Եբարձ ի միջոյ, կը գրէ Գաւրիթեցի, զամենայն աւելորդ անկարգութիւնն յեկեղեցականաց եւ յաշխարհականաց, եւ կարգազարդեալ շքեղացոյց զամենեսեան ուղիղ քարոզութեամբ»: Առաքելաբար կը շրջէր ամէն կողմ, կը կարգէր քահանաներ, կը շինէր եկեղեցիներ եւ «հաստատէր զբարի կարգս յեկեղեցիս եւ ի դիւղս»: Իւր շուրջը հաւաքած ուշիմ պատանիներ, կը շրջէր անոնց հետ եւ կ'ուսուցանէր: Կարեւոր կէտերու վրայ կը բանար դպրոցներ, եւ իւր աշակերտներէն կը նշանակէր անոնց «գպրապետ». անոնք ապա ձեռնադրուեցան արեղայ կամ երէց «բաւական ինքեանց եւ ժողովրդեան»: Ուր որ կը հասնէր Պօղոս վարդապետ կա'մ եկեղեցի կը հիմնարկէր եւ կա'մ կը նորոգէր խախտուածները: Ի մէջ այլոց նորոգեց Աստապատի Ս. Ստեփանոս վանքը, եւ ընդարձակեց գիւղի եկեղեցին: